ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2024թ. № 891

ԱՐՏՅՈՄ ՍԼԱՎԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 152.2-րդ հոդվածով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Արտյոմ Սլավիկի Սարգսյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող, 06-068-0103-0009 կադաստրային ծածկագրով «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Արջհովիտ 13-րդ փողոց 1/3» հասցեի սննդի արտադրամասն օգտագործում է օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային՝ որպես հասարակական սպասարկման օբյեկտ (հանրային սննդի կետ), հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Նարեկ Սարգսյանի կողմից 2024 թվականի օգոստոսի 21-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Արտյոմ Սլավիկի Սարգսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ քսան հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Արտյոմ Սլավիկի Սարգսյանին:

3. Արտյոմ Սլավիկի Սարգսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Սպիտակի համայնքապետարանի **900245161063** գանձապետական հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Սլավիկի Սարգսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 4
ք. Սպիտակ